

Արագածը իւր գրգուխը պատռել է,
Գիշերը ցերեկ արտասուելով դադարել է,
Ջիւ գորգիս իւր օտար սեղը պատրել է,
Ասացե՛ք երբ ես չիլամ էլ ո՛վ լայ:

Արմաւիրը սեւ հագել ոսկե ցրգուխ,
Վաղարշապատը հուր շուճի, է լոկ մուխ,
Հայաստան եղել է խաւար մառախուղ,
Ասացե՛ք երբ ես չիլամ էլ ո՛վ լայ:

Մեզ պիտի վաս որդւոց վաս օրը սա է,
Որքան որ պատեցիմք մեր հօրը՝ սա է.
Սիճեմք իւր եղբարց յորդորը սա է.
Ասացե՛ք երբ ես չիլամ էլ ո՛վ լայ:

ՍԼՅԵՆՏ

Մ. Խ.— Կովկասեան Հայ աշուղներու եմա-
նողութեամբ՝ Սէլեւզ կեղծանունով այնքան սիրուն
երգեր գրող Մատթեանի այս երկու անտիպ էջերը
գտանք Արամ Անտոնեանի ձեռագիր ձեռն
քածուն ձեռն:

Ա Մ Է Ն Ի Ն Չ Ա Ն Յ Ե Ա Լ ՈՒ Մ

(Զ Ր Ո Յ Ց)

Վառուող Հնոցի կրակը լուսաւորում էր
մեծ սենեակի մի մասը, թողնելով միթու-
թեան մէջ Հնուար անկիւնները:

Հնոցի առաջ լայն «վոլտերեան» թիկ-
նաթոռում նստած է մի կին:

Նա ծեր է, շատ ծեր:

Փոքրիկ, ցամաքած, թօշնած երես, ծած-
կուած բազմաթիւ կնճիռներով, անիպյլ,
խորը կողերի մէջ թաղուած աչքեր, ուղ-
ղած կրակին, ձեան նման ճերմակ մազեր,
որ տեղ տեղ դուրս են եկել գլխի սեւ
փաթթոցից, փոքրիկ, տաշած ձեռքեր եւ
ոտքեր, որոնցից մէկը դրած է Հնոցի եր-
կաթեայ վանդակի վերայ:

Պառաւր անշարժ է. միայն նրա ձեռ-
քերը անդադար դողում են:

Ի՞նչ է մտածում նա, ո՞ւր են նրա խո-
հերը...

Հնոցի մարմարի վրայ դրուած ժամա-
ցոյցի միակերպ թիւքթաքը կտրում է սեն-
տիգրիսը

եակի խոր լուռութիւնը. նրան ժամանակ առ
ժամանակ միանում է Հնոցում ալրուող
փայտերի շվշվոցը:

Սենեակի դուռը կտմայ բացուեցաւ եւ
արանքում երեւաց մի գլուխ:

— Կարելի՛ է քեզ մօտ, մեծմայր:

Պառաւր կարծես արթնացաւ խոր քնից:

— Դո՛ւն ես, Ասողիկ, մտիւր, մտիւր:

Օրիորդը ցատկելով մօտաւ ներս, չոքեց
մեծմօր ոտքերի տակ, առաւ ատիւրի մէջ
նրա գողգոթուն ձեռքը, եւ սկսեց շոյել,
Համբուրել:

Պառաւր մօտեցրեց Ասողիկի գլուխը
իր կրծքին, մի քիչ կռացաւ եւ սկսեց շո-
յել նրա սեպ սեւ մազերը որ գանգուղնե-
րով թափուում էին նրա ուսերին:

— Մեծմայր, ի՞նչ բերեմ քեզ, կա՞թ
թէ՛ մածուն:

— Ոչինչ չեմ կամեում:

— Չասես, չասես. մի՛թէ կարելի է ո-

A.R.A.R.@

յինչ չուտել... չէ՝ որ բժիշկը խտտել սլատու-
ուիրեց, որ դու ամէն երեկոյ...

— Բժիշկը, հեգնութիւն կորեց պառաւը,
ես այլ եւս կարօտ չեմ նրա խրատներին:

— Ի՞նչպէս...

— Այո՛, անգինս, արդէն ժամանակ է
թողնել այս աշխարհը, թողնել ձեզ բոլո-
րիկ եւ հեռանալ...

Եւ պառաւը լռեց:

— Մեծմայր, հարկաւոր չէ խօսիլ մահ-
ուան մասին... ապրիր, ապրիր... մենք բո-
լորս ջերմ սիրով ենք քեզ:

— Ապրի՛ր... ինչո՞ւ, երբ իմ հոգեղէն
կազմուածքս քայքայուել է, երբ մաշ-
ուած սիրտս հազիւ հազ բաբախում է,
երբ կեանքը, այժմէական կեանքը վա-
ղուց կորցրել է ինձ համար իր միտքը,
նշանակութիւնը... ո՛չ, ո՛չ, ես չեմ կամե-
նում այլ եւս ապրիլ, հասկանո՞ւմ ես,
Աստղիկ, չեմ կամե՞նում...

— Կեանքը ա՛յնպէս գեղեցիկ է, մեծ-
մայր:

— Գեղեցիկ է, չեմ վիճում, նա գեղե-
ցիկ է քեզ համար. դու դեռ չես ըմպել
այդ կեանքի բաժակից. իսկ ես... ես դա-
տարկել եմ այդ բաժակը մինչեւ տակունց-
քը: Ես վաղուց կշտացել եմ կեանքից եւ
այժմ հանգիստ սրտով կարող եմ հեռա-
նալ սուտերների աշխարհը:

Սենեակում կրկին սիրեց սուտուները:
Հնոցի փայտերը այրուելու վրայ էին:

— Այո՛, Աստղիկ, ես ապրել եմ, ապ-
րել եմ այնպէս, ինչպէ՛ս տա՛յ Աստուած՝
կարողանաք ապրիլ դուք, իմ սիրելի դա-
ւաններ եւ թոռներ:

Եւ պառաւը յերուեց բազկաթոռի փա-
փուկ մէջքին, ուղղեց հայեացքը կրակի
փայլուն, երեքուն լեզուներին եւ ընկաւ
մտաւորանքութեան մէջ:

Կարծես նրա աչքերի առաջ անցնում
էր վաղեմի, հին անցեալը իր բոլոր ման-
րամանութիւններով:

Ահա նրանց պապեհական ամրոցը լեռ-
ների լանջին իր պարիսպներով, աշտարակ-
ներով եւ մեծ պարտէզով. ահա մօտակայ,

դարեւոր անտառը, ուր տղամարդիկ գնում
էին որսի. ահա լեռները իրենց վիթխարի,
միշտ ամպամած գագաթներով, ուր երեք
չէր հաւուս միջուկ, ահա ինքը, գեղեցիկ,
չարահճի Գիւլնարը, ահա ընկերուհիները,
մշտական խաղերը, երգերը, պարերը...

Սենեակի սուտուները կորեց պառաւի
սրտի հեռաւոր խորքերից դուրս եկած
«ախ»ը:

Նա բաց արեց աչքերը եւ նայեց
շուրջը:

— Պատմի՛ր, մեծմայր, ինչպէս անցաւ
քո կեանքը:

Պառաւը ժպտաց:

Միաժամանակ ժպտացին եւ նրա ան-
փայլ աչքերը, ամբողջ երեսը, կարծես ա-
րեւի լուսափայլ ճառագայթները ընկան
նրա խորշումած, մագաղաթեայ երեսի վրայ:

— Այո՛, ես ապրել եմ. իմ ժամանա-
կը ուրիշ էր, ուրիշ. դու գիտես, որ ես մե-
լիքների ցեղից եմ. ես ծնուել եմ եւ
մեծացել լեռներ, խոժոռ, անհամբույր, հա-
գարեան ամրոցում, որի դահլիճի պատե-
րից կախ էին տուած գէնքեր, զրահներ,
համառ դիւշակներ, աղեղներ եւ նետեր.
Ես շատ քիչ էի տեսնում հօրս, միակ եղ-
բօրս եւ առհասարակ մեր ընտանքի տղա-
մարդկանց. երբ լինում էին որսեր, երբ
շների կաշոյը, ձիաների խրինջոյը տա-
րածուում էին մեր լաշն բակում, ես նեղ,
արաքական ճաշակով շինած պատուհանից,
թաւշեայ վարագոյրի արանքից դիտում
էի որսի պատրաստութիւնները. հետեւում
էի հետաքրքիր աչքերով անցուղարձ ա-
նոյններին, նրանց ձեռքերին շղթայած բա-
ղէներին, նրանց արեւի շողերից փայլող
գէնքերին:

Աստղիկը, տարուած այդ նկարագրով,
պինդ սեղմեց մեծմօր փափուկ ձեռքը:

— Մենք, կանայք եւ աղջիկներ, ապ-
րում էինք ամրոցի մի մասում եւ ոչ մի
յարաբերութիւն չունէինք տղամարդկանց
հետ:

— Զէ՛ որ դա բանտ էր. քեզ համար,
մի տեսակ հարէմ:

— Բա՛նտ, չէ, հոգեհակա,— եւ պառակի երեսին խաղաց խորամանկ ժպիտը: Կային օրեր, երբ բաղդը ժպտում էր եւ մեզ մենք սարքում էինք ամրոցի բակում զանազան խաղեր, պարեր, մեծ տօներին մենք գնում էինք եկեղեցի, մօտակայ վանքը, որ ուխտատեղի էր. Համբարձման օրը վիճակ էինք հանում խաչքարի աղբիւրի մօտ. Վարդավառին, զարգարուած ծաղկեայ պտակներով, միմեանց վրայ ջուր էինք սրսկում եւ այդ ժամանակ տեսնում էինք երիտասարդներին հետ. երկար, բարակ զրուցել նրանց հետ ի հարկէ անկարելի էր, բայց մենք այնու ամենայնիւ խօսում էինք անձայն, լուռ, աչքերով եւ հիանալի հասկանում էինք միմեանց:

— Մի՛թէ... ի՞նչ հիանալի է... յետո՛յ, յետո՛յ:

— Եւ այդպէս, այդ լուռ, աչքերի եւ յօնքերի խօսակցութեան ժամանակ, ես ընտրեցի ինձ կեանքի ընկեր:

— Մեծ հօ՛րս:

— Հա՛, Աստուած լուսաւորէ նրա հոգին: Հայրս վճռել էր տալ ինձ ուրիշին, մեր դուրսի մելիքի օրդուհւ. երբ ես իմացայ այդ, մեր ծերունի ծառայի միջոցով իմաց տուի սրտիս ընտրածին եւ նա գիշերով փախցրեց ինձ ամրոցից:

Պառաւ լռեց, նրա աչքերը, մինչ այդ անխալ, սկսեցին ցուլալ. երջանկութեան ժպիտը խաղաց նրա չորցած, կապտած շրթներին:

Նա պինդ սեղմեց ափի մէջ Աստղիկի ձեռքը:

— Ի՛նչ լաւ է, մեծմայր. տոյգպէս նկարագրում են վէպերում:

— Վէպերո՛ւմ... չգիտեմ. մեր ժամանակը բաց ի Սաղմոսից եւ Պրինձէ Քաղաքը՝ից մենք ոչինչ չէինք կարդում եւ շատ շատերը մեզինից կարդալ անգամ չգիտէին. այդ վէպերը, լրագիրները, Թատրոնը եկան յետոյ:

— Բայց ինչպէ՛ս եղաւ, որ դու հակառակ պապիս կամքին գնացիր մարդու:

— Հա. երբ նա փախցրեց ինձ, Հայրս նախ շատ գայրացաւ. նա հաւաքեց իր մտերիմներին եւ ստրկներին. եւ խմբով

ընկաւ մեր ետեւից. նրանք վճռել էին զէնքի ուժով դարձնել ինձ տուն. մեր վստահայրը սուրբ մարդ էր. նա մէջ մտաւ, խրատեց Հօրս եւ նրա բարկութիւնը կամաց կամաց շողիացաւ եւ վերջ ի վերջոյ նա ներեց մեզ:

— Եւ դու երջանի՛կ էիր:

— Անչափ. մեր կեանքի ուղին ծածկուած էր անուշահոտ վարդերով. երբ մեծհայրդ երգում էր, մարդ մոռանում էր իր կսկիծը, ցաւերը եւ այս մեղսալից աշխարհը. նա սլանում էր հոգւով դէպ ի կապուտակ, ջինջ երկինքը, դէպ ի անհուն տարածութեան մէջ մեզմտ պլպլող աստղերը...

Եւ պառաւ կրկին լռեց:

Նա անթարթ նայում էր հնոցի արդէն մարած կրակին եւ սակաւաթիւ կայծերին, որ բարձրանում էին եւ կորչում սեւացած երգիկում:

Լուռ էր եւ Աստղիկը:

Նա գլխիկոր, ծալապատիկ նստած էր մեծմօր հագերի տակ:

Սենեակում սիրում էր խորին լուռութիւն:

Եւ յանկարծ այդ լուռութեան մէջ լըսուեցաւ պառակի ձայնը:

Նա երգում էր.

«Համբարձում եայլա,
եայլա զան, եայլա.
Անճրե եկաւ Եղապիւն,
Ուռու սեղեւ դողալին,
Հրեա եկաւ իմ եարք՝
Այ ձին օսկին խաղալին.
Համբարձում եայլա,
եայլա զան, եայլա:»

Աստղիկը ցնցուեց, բարձրացրեց գլուխը եւ զարմացած նայեց մեծմօր կերպարանափոխուած երեսին, ուր խաղում էր անհուն երջանկութեան ժպիտը, քղաւորուած վաղուց անցած փնայած յիշողութիւններով:

Հնոցի փայտերը վերջին անգամ ուժգին շվշվացին, անթիւ անդօր կայծեր անհետացան երգիկում եւ հնոցը մարուեց:

ԳԵՂՈՐԳ ՉՈՒԻՐԱՐ

Նոր Նախիչեւան, 1929